



<<ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՈՒՄ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՄՈՒՑԻՉԻՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՍԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՆԵՐՋԱՏԱԿԱՆ ԳԵՂՁ-ՎԱՀԱՆԱԳԵՂՁ
ԱՌԱՐԿԱ՝ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԵՂԻՆԱԿ՝ ՎԱՐՍԵՆԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
ՄԱՐԶ՝ ԱՐՄԱՎԻՐ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՆՈՒՆ՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԹԻՎ 9
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----2

Հետազոտական աշխատանքի նպատակները-----

Հետազատական աշխատանքի խնդիրները-----

ԳԼՈՒԽ1

1. 1 Ներգատական հորմոններ-----

1. 2 Ներգատական գեղձեր-----

1. 3 Վահանագեղձ-----

ԳԼՈՒԽ2

2. 1 Ախտանիշները-----

2. 2 Հիվանդությունները-----

ԳԼՈՒԽ3

3. 1 Եզրակացություն-----

3. 2 Առաջարկներ-----

3. 3 Օգտագործված գրականություն-----

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նյարդային համակարգի ազդեցությամբ մարդու օրգանիզմի բջիջների և օրգանների գործունեությունը կարող է խթանվել, արգելակվել, ուժեղանալ կամ թուլանալ, ինչը պայմանավորված է նյարդային վերջույթներում արտազատվող հատուկ նյութով՝ միջնորդանյութերով: Այդ համակարգի ազդեցությամբ կարող են փոփոխվել բջիջների և օրգանների գործառական վիճակն ու քիմիական կազմը, կառուցվածքի առանձնահատկությունները: Օրգանիզմի գործառույթների հումորալ կարգավորումն իրականացվում է կենսաբանորեն ակտիվ նյութով, որոնց մի մասն արտադրում է գեղձերում, իսկ մյուս մասն էլ տարբեր ոչ գեղձային բջիջների նյութափոխանակության արգասիքները: Հորմոնները սինթեզվում են ներզատիչ գեղձերում: Նրանք անցնում են արյան մեջ և արյան հոսքով հասնում են որոշակի բջիջների կամ օրգանների ու փոփոխում դրանց գործունեությունը:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտական աշխատանքի նպատակները՝

- Ծանոթանալ օրգանիզմի կենսագործունեությունը կարգավորող ներզատական գեղձերին
- Գիտելիքներ հաղորդել օրգանիզմի հորմոնների դերի մասին
- Օրգանիզմում մի շարք կենսաբանական պրոցեսներ պայմանավորված են ներզատական գեղձերի գործունեությամբ
- Ուշադրություն դարձնել առաջացած հիվանդությունների և ճիշտ լուծում տալ առաջացած խնդիրներին

Հետազոտական աշխատանքի խնդիրները՝

-
- Հետազոտությունների արդյունքում եթե ախտորոշվել է հիպոթերեոզ, անհրաժեշտ է դեմել բժշկի և հետևել բժշկի խորհուրդներին
- Ընդունել նրա կողմից նշանակված դեղամիջոցները, որոնք հնարավորություն են տալիս կարգավորել հորմոնների մակարդակը:
- Խուսափել պարզ ածխաջրերի և շաքարի օգտագործումից:

- Մննդակարգ ներառել բարդ ածխաջրեր և հնարավորինս նվազեցնել շաքարի և մյուս ածխաջրերի օգտագործումը, որոնք կալորիա են ավելացնում:
- Շարունակել շարժվել-ֆիզիկական ակտիվությանը ավելորդ կգ-ից ազատվելու լավագույն միջոցներից է հատկապես այն անձանց համար, ովքեր տառապում են հիպոթերեոզով:
- Օգտագործել կոկոսի յուղ, որովհետև այն պարունակում է ճարպեր, որոնք կարևոր են օրգանիզմի համար, բացի այդ՝ այն նպաստում է ավելորդ կգ-ից ազատվելուն, օգնում է նաև խոլեստերինի մակարդակը կայուն պահելու համար: Կոկոսի յուղի մեջ պարունակող ճարպաթթուները հեշտությանմեներգիայի վերածվում:

1.1 ՆԵՐՁԱՏԱԿԱՆ ՀՈՐՄԵՆՆԵՐ


Օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաները կարգավորող հումորալ մեխանիզմներում էական դերը պատկանում է ներգատական գեղձերին: Նրանք չունեն ծորաններ, արյան մեջ ներգատում են հորմոններ, որոնք օժտված են կենսաբանորեն բարձր

ակտիվությամբ: Դրանք սպիտակուցային, ճարպային կամ այլ բնույթի նյութեր են: Արյան հունով տարածվում են ամբողջ օրգանիզմում և ուրույն ազդեցություն ունենում գործընթացի վրա փոփոխում են օքսիդացման ընթացքի

ակտիվությանը, բջջաթաղանթների թափանցելիությանը, սպիտակուցների, ճարպերի ու ածխաջրերի սինթեզը, դրդում կամ արգելակում օրգանների աշխատանքը, բջիջների ու հյուսվածքների ձևավորումը, օրգանիզմի աճը, զարգացումը և այլն:

1. 2 ՆԵՐՁՍՏԱԿԱՆ ԳԵՂՁԵՐ

Ներգատական գեղձերին են պատկանում-մակուղեղը(հիպոֆիզը) վահանագեղձը, մակերիկամները, ենթաստամոքսային գեղձի կղզյակային հատվածը, սեռական գեղձերը: Ենթաստամոքսային գեղձը և սեռական գեղձերը խառը գեղձեր են: Մարդու ներգատական գեղձերը գտնվում են կենտրոնական նյարդային համկարգի կարգավորող ազդեցության ներքո, որը իրականանում է ենթատեսասաթմբի միջոցով: Նրանում տարբեր են ներգատական բջիջների կուտակներ, որոնցում սինթոզվում են հորմոններ: Հորմոնները առաջանում են հատուկ գեղձերում, որոնց անվանում են ներգատական գեղձեր, դրանց արտադրած հորմոններն անմիջականորեն անցնում են միջբջջային հեղուկի և այրան մեջ:



Արյունն այդ նյութերը տարածում են ամբողջ օրգանիզմով մեկ, ընկնելով հյուսվածքներ և օրգաններ՝ հորմոնները դրանց վրա որոշակի ազդեցություն են ունենում, օրինակ՝ ազդում են հյուսվածքների աճին, սրտամկանի կծկման հաճախականության վրա առաջացնում են անոթների լուսանցքների նեղացում: Հորմոններն շատ ակտիվ են և ազդում են նույնիսկ ամենաչնչին քանակության դեպքում, սակայն քայքայվում են շատ արագ դրա համարն անհրաժեշտ է, որ դրանք մշտապես մուտք գործեն արյան կամ հյուսվածքային հեղուկի մեջ: Սովորաբար ներգատական գեղձերը չափերով փոքր են և ունենում են մինչև մի քանի գրամ կշիռ: Հորմոնները խթանում են տարբեր փոփոխություններ, որոնք օգնում են օրգանիզմին հաղթահարելու ստեղծված սթրեսային իրավիճակը: Հորմոնները


սինթեզվում են բոլոր կաթնասունների օրգանիզմում, նրանք հայտնաբերվել են նաև այլ կենդանի օրգանիզմներում:

Վահանագեղձի կառուցվածքը

Վահանագեղձը ներգատական կարևորագույն գեղձերից մեկն է: 1543թ. այն նկարագրել է Վազալին, իսկ 1656թ-ին ստացել է իր իսկ անվանումը 1 դար հետո: Վահանագեղձը կազմված է 2 բլթից և նրանց միացնող նեղուցից: Համարվում է ներգատական ամենախոշոր գեղձը: Չափահաս մարդու մոտ զանգվածը 25-60գ է: Գեղձի հյուսվածքը կազմված է ֆոլիկուլների (բշտիկների) բազմաթիվ բջիջներից՝ թիրոցիտներից նեղուցից:

1. ՅՎԱԱՀՆԱԳԵՂՁ

Վահանագեղձի գլխավոր հորմոնը թիրոքսինն է: Մյուս հորմոնը՝ տրիյոդթիրոքսինը, արտադրում է շատ քիչ քանակությամբ: Հիմնականում առաջանում է թիրոքսինից, երբ այն կորցնում է յոդի մեկ ատոմ: Այս գործընթացը տեղի է ունենում շատը հյուսվածքներում հատկապես լյարդում և կարևոր դեր է խաղում օրգանիզմում հումորալ հավասարակշռության պահպանության գործում:



Վահանագեղձը տեղադրվում է կոկորդի վահանաճառի առջևի մասում, որի պատճառով ստացել է իր համապատասխան անվանումը: Վահանագեղձն արտադրում է յոդ պարունակող թիրոքսին հորմոնը, որը կարգավորում է հիմնականում նյութափոխանակությունը, աճը, զարգացումը:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱԽՏԱՆԻՇՆԵՐ

Հորմոնները չեն հանդիսանում կառուցվածքային նյութեր, էներգիայի աղբյուր, սակայն գեղձերի գեր և թեև ֆունկցիայի դեպքում առաջանում են ծանր հիվանդություններ:



-Վաղ մանկական հասակում վահանագեղձի թերֆունկցիայի դեպքում զարգանում է գաճաճություն կրետինիզմ հիվանդությունը, որի հիմնական նշաններն են՝

- Կարճ հասակը
- Մտավոր թերզարգացումը
- Փքված որովայինը
- Ատամների անկանոնությունը
- Գունագրկված մաշկը

-Թերֆունկցիայի հասուն շրջանում առաջանում է լորձայտուց(մեքստեդեմա)հիվանդությունը, որի ժամանակ նկատվում է՝

- Նյութափոխանակության խանգարում
- Արյան ճնշման անկում
- Արյան դանդաղ հոսքի հետևանքով առաջանում է միջիյուսվածքային հեղուկի շատացում
- Նկատվում է այտուց
- Մաշկը չորանում և դեղնում է
- Նկատվում է քնկոտություն
- Հիշողության վատացում
- Այն վայրերում՝ որտեղ, ջրի ու սննդի մեջ քիչ է յոդը վահանագեղձը գերաճում է և զարգանում է տեղային խափաչ հիվանդությունը

-Վահանագեղձի գերֆունկցիայի դեպքում առաջանում է քաղցրության հիվանդություն, որի ժամանակ նկատվում է՝

- Կենտրոնական նյարդային համակարգի դրդունակություն
- Նյութափոխանակության բարձրացում
- Սրտխփոց
- Մարմնի կշռի անկում

Բազեդովյան հիվանդության բուժման նպատակով կիրառում են վահանագեղձի ակտիվությունն նվազեցնող դեղամիջոցներ, դրանցում առկա է ռադիոակտիվ յոդը, որը քայքայում է վահանագեղձի բջիջների մի մասը, հիվանդության բուժման նպատակով կիրառվում են նաև վահանագեղձի մասնակի հատումը, որի պարագայում հորմոնի արտադրումը նվազում է:

Այս փոքրիկ թիթեղի ձև ունեցող օրգանը մասնակցում է օրգանիզմի ընթացող բազմաթիվ գործընթացներին, որի աշխատանքի խանգարումը կարող է խիստ բացասաբար անդրադառնալ ընհանուր առողջական վիճակի վրա և հենց սա է պատճառը ,որ հարկավոր է ժամանակին դիմել մասնագետին և չանտեսել խնդիրների մասին հուշող ախտանիշները:

ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ

- Տրամադրության կտրուկ տատնումներ
- Քաշի կորուստ/ավելացում
- Դող կամ առատ քրտնարտադրություն
- Մաշկի չորություն
- Մազերի կորուստ
- Վտանգավոր է հղիության ընթացքը

Գոյություն ունեն ներգատիչ գեղձերի մի շարք հիվանդություններ, որոնց ծագման պատճառը նյարդային համակարգի գործունեության խանգարումներն են: Յուրաքանչյուր ներգատական գեղձերում կան նյարդային

վերջավորություններ, որոնց գործունեության խանգարումներն իրականում կախված են կենտրոնական նյարդային համակարգից:

Խանգարումներ

Վահանաձև գեղձի հիվանդությունների հետևանքով օրգանիզմում կարող են ի հայտ գալ բազմաթիվ խանգարումներ որոնք լրջորեն ազդում են հիվանդի կյանքի որակի վրա: Վահանաձև գեղձի հիվանդությունները ժամակակից հասարակությունում ամենատարածվածներից են: Դրանք առավել հաճախ հանդիպում են կանանց շրջանում: Վահանաձև գեղն օրգանիզմում բազմաթիվ գործառույթներ է իրականացնում իսկ գեղձի հիվանդության դեպքում խանգարվում են:

Սա նշանակում է որ ժամանակին դիմել բժշկի ախտորոշել հիվանդությունն ու բուժում ստանալ:

Հատկանշանական է որ հիվանդությունը կարող է բավական երկար ժամանակ հստակ ախտանշաններ չունենալ, իսկ եղած ախտանշաններն էլ կարող են ընկալվել որպես այլ խնդիրների հետևանք:

Գեղձի հորմոնների նորմայից քիչ կամ շատ արտադրվելու դեպքում կարող են նկատվել մի շարք խանգարումներ:

1-Փորկապություն, նյութափոխանակության հետ կապված խնդիրներ

Վահանաձև գեղձի հիվանդություններն հաճախ փոփոխություններ են առաջացնում նյութափոխանակության համակարգում; Կախված ախտանշաններից հնարավոր է հասկանալ ինչ խնդիր ունի վահանաձև գեղձը;

2-Դաշտանային ցիկլի խանգարում, հնարավոր է անպտղություն

Վահանաձև գեղձի հիվանդությունների հետևանքով խանգարվում է նաև դաշտանային ցիկլը

3-Հոդացավեր, ցավ մկաններում

Անկախ տարիքից ու սեռից հիպերթերիոզի դեպքում հիվանդները զանգատվում են մկաններում և հոդերում զգացող ցավից; Մա իսկապես լուրջ անհարմարություններ է ստեղծում, բայց բուժումը սկսելուց կարճ ժամանակ անց սովորաբար անցնում է ;

Վահանաձև հիվանդությունով տառապող անձինք հաճախ տառապում են նաև դաստակային թունելի համախտանիշով; Հիպերթերիոզի դեպքում հիվանդները հաճախ զանգատվում են ցավից ու թուլությունից վերջույթներում

4-Խոլեստերինի բարձր մակարդակ`

Այո վահանաձև գեղձի հիվանդությունները կարող են ազդել արյան մեջ խոլեստերինի մակարդակի վրա եթե ոչ մի կերպ չի հաջողվում կարգավորել խոլեստերինի մակարդակը հարկավոր է ստուգել վահանաձև գեղձը;

5-Քնի հետ կապված խնդիրներ

Խնդիր որը բավական հաճախ է ուղեկցվում վահանաձև գեղձի խանգարումներին և զգալիորեն ազդում հիվանդների կյանքի որակի վրա;

Վահանաձև գեղձի հիվանդությունների դեպքում նույնիսկ մի քանի ժամ շարունակ քնելուց հետո մարդը հոգնածություն է զգում ուժերը չեն բավականացնում

6-Մաշկային փոփոխություններ

Վահանաձև գեղձի հիվանդության դեպքում մազաթափությունը հաճախ ուղեկցվում է նաև մաշկային խնդիրներով;

Վիտամին D վահանաձև գեղձի խնդիրների դեպքում

Վիտամին D չափազանց կարևոր բաղադրիչ է մեր առողջության համար այն ներգրավված է բազմաթիվ գործընթացներում, ներառյալ բջիջների աճի վերահսկումն իմունային համակարգի աշխատանքի և բորբոքման նվազեցումը;

Այն նաև մասնակցում է մեր ոսկորների և հոդերի ձևավորմանն ու պահպանմանը ;

Վիտամին D-ի պակասը կախված է վահանաձև գեղձի խնդիրների հետ;

Վիտամին D-ի պակասը կապված է աուտոիմուն հիվանդությունների հետ օրինակ՝

Ռեվմատոիդ, արթրիտ, աղիների բորբոքային հիվանդությունները, ցրված սկրելոզը, գայլախթը և նույնիսկ առարին տիպի շաքարախտը;

Հետազոտությունները ցույց են տվել որ վիտամին D-ի անբավարարությունը և կալցիումի պակասը կապված են հիպոթերեոզի հետ; ԵՎ որքան մեծ է դեֆիցիտը այնքան խնդիրն ավելի լուրջ է; ԵՎ կան նաև դեպքեր երբ որոշ մարդիկ չեն կարողանում կլանել բավարար քանակությամբ վիտամին D, նույնիսկ եթե նրանց սննդակարգը պարունակում է մեծ քանակությամբ վիտամին D

Արդյունքում վահանաձև գեղձի խանգարումները կարող են պայմանավորված լինել գենետիկայով կամ ամբավարարությամբ, կամ երկուսն էլ;

Ի՞նչ անել

Վիտամին D կա հատկապես այնպիսի մթերքներում ինչպիսին են ձուն, ծովային ձուկը, լյարդը, կանաչ տերևավոր բանջարադեղենները; Խորհորդ է տրվում օրական առնվազն 20րոպե դրսում լինել ցուրտ և մութ ամիսներին խորհորդ է տրվում ավելացնել և ընդունել ձողաձկան լյարդի յուղը; Դոզաները լինում են տարբեր կախված առողջությունից, տարիքից և այլ գործոններից կարելի է խորհրդակցել բժիշկների հետ;



ԳԼՈՒԽ 3

Եզրակացություն

Կարելի է եզրակացնել որ, հորմոնները օժտված են մի շարք առանձնահատկություններով

- Շատ հորմոններ չունեն տեսակային յուրահատկություն, այդ պատճառով տարբեր տեսակի կենդանիներից ստացված հորմոնները կարելի է լայնորեն օգտագործել տարբեր տեսակի կենդանիների համար
- Հորմոնները կարելի է սինթեզել
- Հորմոնները անցնելով արյան մեջ հեշտությամբ քայքայվում են հետևաբար անհրաժեշտ է դրանց անընդհատ դրանց արտադրությունը և մուտքն արյան մեջ
- Գոյություն ունի երկկողմանի փոխադարձ կապ գեղձի և արյան մեջ գտնվող հորմոնների մակարդակի միջև
- Ներգատիչ գեղձերի ֆունկցիայի կարգավորումն իրականացվում է մեծ կիսագնդերի կեղևի ցանցանման գոյաթղթային և հիպոթալամուսի հսկողության ներքո: Նյարդային և ներգատական հորմոնները գոյացնում են միասնական կարգավորիչ մեխանիզմ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խամբաբյար Ա. Ա.-մանկական անատոմիա 1985թ.

Մինասյան Ս. Մ.-մարդու և կենդանիների ֆիզոլոգիա 2006թ.

Խուղավերդյան-մարդու ֆիզոլոգիայի հիմունքներ 1998թ.

Թաթևոսյան Վարդանյան-ներգատակ համակարգերի ֆիզոլոգիա 2010թ.